ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# 2016
# ՏԱՐԵԿԱՆ
## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ





# ԱՋԱՓՆՅԱԿ
## ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ





***2016թ. ընթացքում Աջափնյակ վարչական շրջանում իրականացվել են ընթացիկ վերանորոգման, փողոցների, մայթերի և բակերի ասֆալտապատման, սալիկապատման, թեքահարթակների կառուցման և լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքներ.***

- փողոցների և բակերի ասֆալտապատում՝ **79 000մ²,**
- մայթերի, պուրակների սալիկապատում՝ **1 210մ²,**
- եզրաքարերի փոխարինում՝ **230մ,**
- թեքահարթակների կառուցում և վերանորոգում՝ **31 հատ:**

Վարչական շրջանում ևս **11** հասցե ապահովվել է **3 010 մ** երկարությամբ լուսավորության արդիական ցանցով:










***Ոռոգման նոր ցանցի անցկացում, առկա ցանցի վերանորոգում***

- վերանորոգվել է **1 900 գծմ** երկարությամբ ոռոգման ցանց,
- փոխարինվել են փականներ,
- ներկվել են խողովակներ,
- ստեղծվել են **1.5 հա** ընդհանուր մակերեսով նոր կանաչ տարածքներ:








***2016թ. ծաղկային տարածքը կազմել է 1.2 հա***

- տնկվել է շուրջ **122 500 ծաղկասածիլ**,
- գարնանային և աշնանային ծառատունկերին տնկվել է **850 ծառ** և **2 860 թուփ**,
- աշնանը տնկվել է **55 000 կակաչի սոխուկ**,
- իրականացվել է շուրջ **1 250 ծառի** սանիտարական էտ:



***Շքամուտքերի վերանորոգում***
Վերանորոգվել է բազմաբնակարան շենքերի թվով **138** շքամուտք, աշխատանքներն իրականացվել են մուտքերի բոլոր հարկաբաժիններում:

***Վթարային պատշգամբների ամրացում, նորոգում***
Բազմաբնակարան շենքերում վերանորոգվել է վթարային վիճակում գտնվող **14** պատշգամբ:






***Տանիքների վերանորոգում***


- թվով **64** բազմաբնակարան շենքերում վերանորոգվել են **60 80 մ²** ընդհանուր մակերեսով հարթ տանիքներ,
- հիմնանորոգվել է Մարգարյան փ. 27 շենքի **840 մ²** մակերեսով թեք տանիքը,
- իրականացվել են բազմաբնակարան շենքերի **7 070 մ²** ընդհանուր մակերեսով թեք տանիքների մասնակի վերանորոգման աշխատանքներ:







***Վերելակների նորոգում***
Վերանորոգվել է բազմաբնակարան շենքերի թվով **36** վերելակ:



## *Համագործակցություն համատիրությունների հետ*

- բազմաբնակարան շենքերում նորոգման աշխատանքների կազմակերպման համար համատիրություններին տրամադրվել է **10 մլն** դրամի աջակցություն,
- բնակիչների դիմումների համաձայն՝ բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման համար ձեռք է բերվել **5 600 քմ 2800** հատ ասբոհերցաքար:

## *Հարմարավետ բակեր բոլորին*





- շահագործման է հանձնվել **10** բակային տարածք՝ խաղահրապարակներով,
- հիմնանորոգվել են **7100** քմ ընդհանուր մակերեսով **12** բակային տարածքներ, որից **4606** քմ՝ կանաչապատ,
- տեղադրվել են **13** համալիր, **18** մանկական խաղեր և **24** մարզասարք:














***Բակային տարածքների նկարազարդում***
2016թ. ընթացքում վարչական շրջանում իրականացվել են բակային տարածքների նկարազարդումներ ևս **25** հասցեներում:



### *Մինի ֆուտբոլի դաշտերի տեղադրում*

2016թ. ընթացքում շահագործման է հանձնվել մինի ֆուտբոլի դաշտ՝ Շիրազի 38 շենքի հարևանությամբ:



## *ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ», «ԵՐԵՎԱՆ ՋՈՒՐ», «ԵՐԵՎԱՆ ԳԱԶ» ՓԲԸ-ՆԵՐԻ ՀԵՏ*

***Ջրամատակարարման համակարգի վերանորոգում***

- վերակառուցվել է Աշտարակի խճուղուց Սիլիկյան թաղամասը սնուցող ջրատարը,
- վերանորոգվել են ջրագծի բազմաթիվ հանգույցներ, փականներ, կարգավորիչներ և խողովակներ:

***Կոյուղատար համակարգի վերանորոգում***

**Կառուցվել է**

- Բաշինջաղյան 6 շենքի **51 գծմ** երկարությամբ կոյուղագիծ,
- Շիրազի 6, 8, 10 շենքերի **118 գծմ** երկարությամբ կոյուղագիծ:

**Վերանորոգվել են**

- բազմաթիվ կոյուղահորեր և խողովակներ:

***Գազիֆիկացում***

- 16 թաղամասի և թվով **4** նորակառույց բազմաբնակարան շենքերի գազիֆիկացման շնորհիվ գազով ապահովվել է շուրջ **650** բնակարան,
- ներկվել են գազատար խողովակները:

***Էլեկտրաէներգիայի մատակարարման համակարգի նորոգում***

Համագործակցություն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության հետ.

- նորերով է փոխարինվել թեքված և վթարային **12** հենասյուն,
- փոխարինվել և կարգավորվել են **19** բազմաբնակարան շենքերի սնող մալուխագծերը,
- վերանորոգվել են ենթակայաններ:



### *Արտաքին լուսավորության ցանցի անցկացում*

- **10** բարեկարգված բակային տարածքներ ապահովվել են արտաքին լուսավորությամբ,
- **1 880** գծմ ընդհանուր երկարությամբ արտաքին լուսավորության ցանց է անցկացվել ինչպես բակային տարածքներում, այնպես էլ միջբակային ճանապարհներին և փողոցներում,
- մինի ֆուտբոլի նորակառույց **1** դաշտ ապահովվել է արտաքին լուսավորությամբ:

## Այցելություն զորամասեր

Կազմակերպվել է Աջափնյակ վարչական շրջանից ՀՀ և ԼՂՀ սահմանամերձ գոտիներում ծառայող երևանաբնակ **114** ժամկետային զինծառայողների **138** ծնողների այցելությունը զորամասեր:







## Համագործակցություն ՀԿ-ների հետ

- Տարատեսակ սոցիալական ծրագրեր են իրականացվել «Արևամանուկ» ՀԿ-ի, «ՍՕՍ» մանկական գյուղեր ՀԲՀ-ի, «Լուսինե» կանանց ՀԿ-ի, «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի և «Դիակոնիա» ԲՀԿ-ի հետ,
- «Տնտեսական կայունացում» ծրագրում ընդգրկվել է **15** ընտանիք,
- Սիրիահայ **15** ընտանիքի տրամադրվել է նյութական և ֆինանսական աջակցություն բնակվարձի, կոմունալ վարձավճարների, առողջապահության և կրթության համար:

## Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին և երեխաներին

- **458** ընտանիքի ցուցաբերվել է դրամական օգնություն,
- **420** ընտանիքի տրամադրվել է հագուստ, **92** ընտանիք ստացել է վառելափայտ, **234** ընտանիքի տրամադրվել է կոշիկ,
- սգո արարողությունների համար աջակցություն է ստացել **120** ընտանիք,
- աջակցություն է ցուցաբերվել սիրիահայ **70** ընտանիքի,
- բազմազավակ **8** ընտանիքի տոնական և այլ առիթներով տրամադրվել է անհրաժեշտ կենցաղային տեխնիկա,
- **120** շահառու օգտվում է բարեգործական ճաշարանից,
- սոցիալապես անապահով ընտանիքների 2-րդ և 3-րդ դասարանների շուրջ **300** երեխայի հատկացվել են դպրոցական պայուսակներ,
- ամանորյա տոների առթիվ սոցիալապես անապահով շուրջ **3500** ընտանիքի տրամադրվել են ամանորյա սննդի փաթեթներ:




«Էրեբունի-Երևան 2798» տոնակատարության սոցիալական բաղադրիչի շրջանակում **286** ընտանիքի հատկացվել է անհրաժեշտ կենցաղային տեխնիկա:

- Սոցիալապես անապահով **40** բնակիչ ստացել է պետպատվերի միջնորդագիր՝ պետպատվերի շրջանակում բուժվելու համար,
- «Էքսկուրսիա սոցիալապես անապահով ընտանիքների համար Հայաստանի տեսարժան վայրերով» ծրագրի շրջանակում կազմակերպվել է վարչական շրջանում բնակվող խուլ ու համր հաշմանդամների մեկօրյա հանգիստը Աշտարակի ձոր հանգստյան գոտում,
- վարչական շրջանում հայտնաբերվել է անօթևան **6** քաղաքացի և տեղափոխվել անօթևանների կացարան:

- **2** մանկապարտեզներում իրականացվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ,
- նոր գույքով համալրելու ծրագրով տրամադրվել է **453** մանկական սեղան/աթոռ և **9** սառնարան,
- պարբերաբար կազմակերպվել են միջոցառումներ՝ նվիրված պետական և ազգային տոներին, սպորտլանդիաներ, տարաբնույթ թեմատիկ հանդեսներ, խաղեր և մրցույթներ:



## ՍՊՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ









- «Աջափնյակ» մանկապատանեկան համալիր մարզադպրոցում բասկետբոլ, հանդբոլ, վոլեյբոլ, ֆուտբոլ մարզաձևերից գործում է **24** խումբ, ուր **347** երեխա է հաճախում,
- թիվ 185 դպրոցի մասնաշենքում գործում է շախմատի դպրոց: Առկա է **16** խումբ՝ **270** սանով:

**Վարչական շրջանի սպորտային թիմերն ակտիվ մասնակցել են.**

- ՀՀ Անկախության 25-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների քաղաքային 25-րդ մարզական խաղերին,
- ՀՀ Ազգային ժողովի գավաթի խաղարկությանը, որտեղ թիմերը գրավել են մրցանակային տեղեր, ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթին,
- նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության քաղաքային ռազմամարզական խաղերին,
- մինչև 13 տարեկան աղջիկների և մինչև 15 և 17 տարեկան պատանիների հանդբոլի ՀՀ առաջնությունում մարզադպրոցի թիմերը գրավել են առաջին տեղը և ճանաչվել հանրապետության չեմպիոններ,
- «Առողջ սերունդ, պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային ավանդական փառատոնին, որտեղ երրորդ անգամ անընդմեջ արժանացել են Երևան քաղաքի փոխանցիկ գավաթին, որն ընդմիշտ մնաց վարչական շրջանում,
- «Երևանյան ամառ -2016» ծրագրի շրջանակում ջրաշխարհում կազմակերպված միջոցառմանը:

**Կազմակերպվել և իրականացվել են.**

- «Երևանի Աջափնյակ վարչական շրջանի գավաթ» բաց առաջնություններ շախմատից և վոլեյբոլից,
- ինովացիոն խաղեր. «Արմենիա» ՀԲԿ-ին հարող զբոսայգուն կից մարզահրապարակում գտնվող վարժասարքերի վրա շարունակվում է իրականացվել «Սթրիթ ուորք աութ» մարզաձևի զարգացման և տարածման գործընթացը:






- Հիմնանորոգվել է Մանկապատանեկան տեխնիկական ստեղծագործությունների կենտրոնը, Ա. Ցիցիկյանի անվ. երաժշտական դպրոցը և «Զարթոնք» մանկական գեղագիտական դաստիարակության կենտրոնը,
- «Երևանյան ամառ» ծրագրով իրականացվել են մանկական ժամանցային շոու և ուսուցողական ծրագրեր,
- գործել են բակային ճամբարներ, կազմակերպվել է **110** երեխաների հանգիստը Հանքավանի «Լուսաբաց» ճամբարում:











**Փոխայցեր «Աջափնյակ-Շուշի» համագործակցության շրջանակում**

- Շուշիի վարչակազմի հետ վավերացված համագործակցության հուշագրի շրջանակում Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի գլխավորած պատվիրակությունն աշխատանքային այցերով եղել է Շուշիում:
- Ամբողջ տարվա ընթացքում կազմակերպվել են մասնագիտական փոխայցեր, իրականացվել տարաբնույթ ծրագրեր, որոնցից թերևս ամենախոշորը Շուշիում մանկական խաղահրապարակի կառուցումն է:

**Այցելություն Երևան-Թբիլիսի համագործակցության շրջանակում**

- Թբիլիսոբայի տոնակատարության շրջանակում Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարն այցելել է Թբիլիսի:






# 2016 ԱՋԱՓՆՅԱԿ

ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ


Թեժ գիծ՝
+(374 11) 518-008
ajapnyak@yerevan.am

www.yerevan.am